# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շինարարական կապալային աշխատանքների կատարման ձեռքբերման նպատակով կազմակերպված ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ 19/01 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հուլիսի 25-ին կնքված N ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ 19/01-04 պայմանագրում 2019 թվականի նոյեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝

երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N –շինարարական աշխատանքների իրականացման համար բնակլիմայական անբարենպաստ պայմաններ:

Փոփոխության նկարագրություն – Շինարարության ավարտի ժամկետի երկարաձգում 30 օրացույցային օրով

Փոփոխության հիմնավորում - 25.07.2019թ.կնքված թիվ ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ 19/01-04 պայմանագրի 8.8 կետը

Պատվիրատու` ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարան

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

*25.07.2019թ. ԿՆՔՎԱԾ N* ԼՄԼԲՀ-ԳՀԱՃՁԲ 19/01-04
/ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ/

**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

գ.Լոռի Բերդ «18» նոյեմբերի 2019 թ.

*«ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը», ի դեմս համայնքապետի ժ/պ Էդուարդ Մելիքսեթյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շեն տուն» ՍՊԸՆ, ի դեմս տնօրեն Տ. Թորոսյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով 25.07.2019թ. կնքված թիվ* ԼՄԼԲՀ-ԳՀԱՃՁԲ 19/01-04 պայմանագրի 8.8կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն *համաձայնագիրը հետևյալի մասին:*

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 1.3 կետը շարադրել հետևյալ կերպ.

Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝մինչև 15.12.2019թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, հայերեն լեզվով՝2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Լոռի Բերդի համայնքապետարան
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7
ՀՎՀՀ 06954163
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900252000105

Համայնքապետի ժ/պ՝ Է. Մելիքսեթյան

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Շեն տուն», ՍՊԸ
ք.Վանաձոր, Նարեկացի 3ք 31
ՀՎՀՀ 06940806
ՀՀ Բանկ՝ Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ՝220053334060000

Տնօրեն՝ Տ. Թորոսյան

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ